շէի տանը: Այժմ, ինչպէս երեւում էր, անձամբ եկել էր խորհրդակցել փաշայի հետ, կամ, գուցէ այդ նպատակով կանչուած էր նրանից:

— Դա մեր քաղաքի ոստիկանութեան պետն է, Լաթիֆ-բեկը, — առաջ տարաւ առաջնորդը: — Ամենապատուական մարդ եւ դրա շնորհիւ մեր քաղաքը կատարեալ հանգստութիւն է վայելում:

Ասլանը ձեռքը մեկնեց եւ դէպի այդ «ամենապատուական» մարդը, որ տէր Եղիշէի քրոջ՝ տիկին Թելլիի ամուսինն էր, եւ որին յանձնուած էր որոնել մատնուած Ասլանին: Նա բոլոր ժամանակ իր թաւ, խոժոռ յօնքերի տակից լուռ նայում էր Ասլանի վրայ: Թէ՛ քուրդ բեկը եւ թէ՛ ոստիկանութեան պետը՝ երկուսն էլ զէնքերով էին նստած: Նայելով վերջինի վրայ, ես մտածում էի, որ այնպիսի բարի եւ ազնիւ կինը, որպիսին էր Թելլի-խաթունը, մի կատարեալ զոհ պէտք էր համարել այդ տեսակ գազանի ձեռքում:

Բացի քուրդ բէկից եւ ոստիկանութեան պետից, միւս հիւրերի թիւը շատ փոքր էր. նրանք երեք հոգի էին միայն, ազգով հայ: Առաջինի վրայ ցոյց տալով, առաջնորդը ասաց.

— Դա մեր հայ հասարակութեան առաջնակարգ անձինքներից մէկն է, Շարման-բեկը: Բոլոր արքունական շինուածքների կառուցման կապալառութիւնը դրա ձեռքումն է, որ ապացոյց է իր մեծ հաւատարմութեան: Շատ ժամանակ չէ, որ արժանացաւ օգոստափառ սուլթանի շնորհած շքանշանին:

Եւ իրաւ, նրա կուրծքի վրայ փայլում էր մի շքանշան: Շարման-բեկի անունը լսելով, ես իսկոյն յիշեցի վարպետ Փանոսի մի հետաքրքիր պատմութիւնը արքունի զինորանոցների կառուցման մասին: Այդ Շարման-բէկն էր, որ շինութիւնների բոլոր ծախքը հայ հասարակութեան տուժել տալով, միեւնոյն ժամանակ, նոյն ծախքը ամբողջապէս ստացաւ կառավարութեան գանձարանից եւ բաժանեց փաշայի կամ այլ պաշտօնական անձանց հետ: Այդ պատմութիւնը ես պիտի կրկնեմ, որ դու լաւ մտաբերես, ընթերցող:

Վանի շրջակայքում, կամ Պարսկաստանի սահմանի գծի վրայ, տաճկաց սահմանապահ զինորները, զօրանոցնէր չունենալով, սովորաբար միշտ բաժանուած էին լինում հայերի տներում օթեւանելու համար: Իւրաքանչիւր ընտանիք պարտաւորուած էր պահել մի քանի հոգի այդ հիւրերից: Ինքնակոչ հիւրը դառնում էր, միեւնոյն ժամանակ ընտանիքի տէրը եւ նրա գլխաւորը: Տան հարսը, աղջիկը, կինը ծառայում էին նրան, որպէս աղախիններ, տան տղամարդը հոգ էր տանում նրա ձիուն որպէս ծառայ: Թուլամորթ, որկրամոլ տաճիկ զինորը չափազանց նուրբ ճաշակ է ստանում եւ խիստ պահանջող է լինում, երբ հայի տանը ձրի կերակրւում է: Իսկ երբ նրա պա-